ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/2.7/2.10-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. փետրվարի 5-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N 2-ի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» և 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ս.Հակոբյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ |
| Ա.Մկրտչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ |
| Ս.Ասլիզադյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ |
| Ս.Հովհաննիսյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ |
| Հ.Սահակյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Մ.Հակոբյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական |
| Շ.Հովսեփյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար |

Քվորումն ապահովված է:

*Լսեցին՝*

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

*Որոշեցին՝*

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- Ծրագրի հավելված N 2-ի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» և 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով՝ համապատասխանաբար «Բոգոսսի» ՍՊԸ-ի և «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրերի ընթացքի վերաբերյալ:

*Լսեցին*

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ

Ծրագրի հավելված N2-ի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» և 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով՝ համապատասխանաբար «Բոգոսսի» ՍՊԸ-ի և «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրերը տեղադրվել են Mulberry համակարգ պայմանագրի նախագծերի վերաբերյալ Իրավաբանական և Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչությունների համաձայնեցման գործընթացն ապահովելու նպատակով:

Այս գործընթացի արդյունքում Իրավաբանական և Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչությունները ներկայացրել են իրենց առաջարկությունները և դիտողությունները:

Մասնավորապես՝

- Ծրագրի հավելված N2-ի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով «Բոգոսսի» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրում առաջարկվել է պայմանագրի նախագծի N1 և N5 հավելվածներով նախատեսված կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները, ինչպես նաև ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանով հատատված N2 հավելվածի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» միջոցառման վերստուգելի չափանիշներին, որով նախատեսվում է առնվազն 50 Reel ձևաչափով տեսաբազայի ստեղծում, մինչդեռ պայմանագրի նախագծով ներկայացվել է թվով 30-ը:
- Ծրագրի հավելված N2-ի 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրում առաջարկվել է պայմանագրի նախագծի N1 հավելվածով նախատեսված կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները, ինչպես նաև ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանով հաստատված N2 հավելվածի 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառման վերստուգելի չափանիշներին, որով նախատեսված է Armenia.travel վեբկայքի համար անգլերենով առնվազն 30 բլոգ փոստերի տեքստային բովանդակության ստեղծում, իսկ Կազմակերպության կողմից ֆինանսական հախահաշվով ներկայացված է 25-ը:

*Կայացավ քննարկում, որի արդյունքում*
*Հանձնաժողովը միաձայն որոշեց՝*

1. Առաջարկել Ծրագրի հավելված N2-ի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով «Բոգոսսի» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրի նախագծի N1 և N5 հավելվածներով նախատեսված կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները, ինչպես նաև ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանով հատատված N2 հավելվածի 2.7 կետով սահմանված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» միջոցառման վերստուգելի չափանիշներին՝ նախատեսելով 30 փոխարեն առնվազն 50 Reel ձևաչափով տեսաբազայի ստեղծում, միաժամանակ առաջարկելով ընկերությանը ծրագրին համապատասխան վերանայել իրենց կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվը՝ առանց վերջնական գումարի փոփոխության:

Ծրագրի հավելված N2-ի 2.7 կետով նախատեսված «Լուսանկարահանում, տեսանկարահանում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով «Բոգոսսի» ՍՊԸ-ի հետ պայմանագրի կնքման գործընթացը շարունակել վերոնշված փոփոխությունը իրականացնելու դեպքում:

2. Առաջարկել Ծրագրի հավելված N2-ի 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրի նախագծի N1 հավելվածով նախատեսված կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները, ինչպես նաև ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանով հատատված N2 հավելվածի 2.10 կետով սահմանված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառման վերստուգելի չափանիշներին՝ նախատեսելով Armenia.travel վեբկայքի համար անգլերենով 25 փոխարեն առնվազն 30 բլոգ փոստերի տեքստային բովանդակության ստեղծում, միաժամանակ առաջարկելով ընկերությանը վերանայել իրենց կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվը՝ առանց վերջնական գումարի փոփոխության:

Ծրագրի հավելված N2-ի 2.10 կետով նախատեսված «Տեքստային բովանդակության ստեղծում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի հետ պայմանագրի կնքման գործընթացը շարունակել վերոնշված փոփոխությունը իրականացնելու դեպքում:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) -

Ա.Մկրտչյան -

Ս.Ասլիզադյան -

Ս.Հովհաննիսյան -

Հ.Սահակյան -

Մ.Հակոբյան -

Շ.Հովսեփյան -